Կարինե ԲԱԶԵՅԱՆ

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայոց առաջնային արտադրության մշակույթում առանձնահատուկ տեղ են գրավում տնայնագործությունն ու արհեստները: Չնայած նրան, որ համաձայն դասակարգման՝ դրանք դիտվում են որպես օժանդակ տնտեսական զբաղմունքներ, սակայն արհեստները միշտ բարձր դիրք են գրավել ու կարևոր դեր խաղացել հայ ժողովրդի կյանքում: Ծագելով դեռևս նեոլիթյան դարաշրջանում, երկրագործության ու անասնապահության հետ զուգընթաց զարգանալով ու կատարելագործվելով արհեստները հասել են ընդհուպ մինչև մեր օրերը:

Արհեստները, կենտրոնանալով քաղաքներում, բարձր զարգացման հասան արդեն միջնադարում, իսկ XVII դարում առավել կատարելագործվեցին մասնագիտանալով ու ճյուղավորվելով: Պատմականորեն քաղաքների թիվը ավելի մեծ էր Արևմտյան Հայաստանում, ուստի պատահական չէ, որ արհեստներն էլ առավել զարգացած էին այս տարածաշրջանում:

Հայազգի արհեստավորները զգալի դեր են կատարել նաև Փոքր Ասիայի արհեստների զարգացման գործում: Դեռևս սելջուկների ժամանակ հայերի ձեռքում էր գտնվում մետաղամշակությունը, և առհասարակ տեղական արդյունաբերության մեջ մեծ էր նրանց տեսակարար կշիռը: Հենց այս պատճառով էլ, սկսած սուլթան Մուհամմադ II-ի ժամանակներից, թուրք ղեկավարող շրջանները Արևմտյան Հայաստանի զանազան մասերից պարբերաբար հայ արհեստավորներին դեպի Կ. Պոլիս էին քշում:[1]

XVI -XVII դարերում Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքները վերածվել էին ռազմական ամրոցների ու քաղաքացիական վարչության կենտրոնների: Արհեստագործական արտադրությունը, որը կարգավորվում ու տնօրինվում էր պետության կողմից, պետք է նախ և առաջ բավարարեր բանակի, պալատի ու ֆեոդալների պահանջները: Արևմտյան Հայաստանում նշված դարերում առավելապես զարգացած էին արհեստագործության հետևյալ ճյուղերը՝ մետաղամշակման հետ կապված արհեստները, գործվածքների արտադրությունը, գորգագործությունը, կաշվի արդյունագործությունը, բրուտագործությունը և բարակոփությունը:

Հայ արհեստավորները բազմաթիվ բնագավառներում չունեին իրենց մրցակիցները. առաջին հերթին պետք է հիշատակել ճարտարապետներին, շինարար վարպետներին, քարակոփներին և որմնադիրներին, ովքեր դարեր շարունակ

---

[1] *1473 թ. Դերջանում Ուզուն-Հասանին հաղթելուց հետո սուլթան Մուհամմադ Ֆաթիհը էրզրումի, Երզնկայի, Տիվրիկի, Սեբաստիայի, Դիարբեքիրի և այլ վայրերի հայ արհեստավորներին հավաքագրեց ու բռնությամբ տեղափոխեց Ստամբուլ: Հետագայում՝ 1479,1514,1534 թվականներին, տեղի ունեցան հայ արհեստավորների նոր բռնի տեղահանումներ՝ մայրաքաղաքում վերաբնակեցնելու նպատակով: Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հ. 4, Եր., 1972, էջ 288-289:*

մեծապես մասնակցել են օսմանյան երկրի շինարարական ձեռնարկներին: Նրանք կառուցել են հանրային շենքեր, պալատներ, մզկիթներ:

Հայերի կողմից է կառուցվել Հայդար Փաշա-Բաղդադ երկաթուղու կարևոր մասը: Պետական շինարարությունը՝ արքունի ճարտարապետությունը, սերտորեն գտնվում էր Պալյան գերդաստանի պատասխանատվության տակ: Այս բացառիկ ընտանիքի 9 անդամները, շուրջ 2 դար իրար հաջորդելով, վարեցին արքունի ճարտարապետի պաշտոնը և Կոստանդնուպոլիսը զարդարելով հրաշակերտներով՝ իրենց բարձր արվեստի կնիքը թողեցին սուլթանների մայրաքաղաքի վրա:

Գորգագործությունը ևս զարգացել է հայերի միջոցով: Կայսրության զանազան քաղաքներում՝ Մեբաստիայում, Կեսարիայում և այլուր, հայերի գործած գորգերը մեծ համբավ ունեին համաշխարհային շուկայում: 19-րդ դարից սկսած՝ նրանք զարկ տվեցին գորգի արտադրությանը:

Երկրում մեծ հռչակ ունեին հայ զինագործ վարպետները: Կարնեցի զինագործները դարեր շարունակ զենք են մատակարարել օսմանյան բանակին: Կարինում մեծ հռչակ ուներ զինագործների Վեմյան գերդաստանը: Քիչ չեն եղել արքունի հայ զինագործները, ովքեր զենքեր էին պատրաստում սուլթանների համար: Նրանցից շատերի գործերն այսօր պահվում են աշխարհի տարբեր թանգարաններում:

Կային արհեստներ, որոնք կարծես թե բացառապես հայերին էին վերապահված: Դրանցից մեկը, օրինակ, ատաղձագործությունն էր և, մանավանդ, կահույքագործությունը: XIX դարի 60-ական թվականներին նշանավոր էր կահույքագործների Քեմհաճյան գերդաստանը: Գալուստ Քեմհաճյանն առաջինն էր կայսրությունում, ով Կոստանդնուպոլսում հիմնեց կահույքի գործարան: Այստեղ արտադրված որակյալ, նրբաճաշակ կահույքը զարդարում էր կայսերական պալատները: Կահույքագործության մեջ Քեմհաճյան ընտանիքը բացառություն չէր: Հետագայում այդ գործին զարկ տվեցին ուրիշ հայ վարպետներ՝ հիմնելով փայտամշակման և կահույքի տարբեր գործարաններ:

Խեցեգործությունը կայսրություն մուտք է գործել XV դարում Քյութահիայում հաստատված հայերի կողմից: Պարսկաստանից գաղթած հայ արհեստավորները զարգացման նոր որակ էին տվել հախճապակու արտադրությանը: Հայ վարպետները հետամուտ եղան և կարողացան յուրացնել եվրոպական, առանձնապես ֆրանսիական կիրառական այս արվեստի նորությունները՝ իրենց արտադրանքը մրցունակ դարձնելով եվրոպական շուկայում: 1914 թ. Քյութահիայում գործող հախճապակու երեք արտադրություններն աշխատում էին Լոնդոնի և Փարիզի շուկաների համար:

Հին ժամանակներից ի վեր հայերի նախընտրած արհեստներից էր ոսկերչությունը: Ոսկերչության կարևոր կենտրոններից էին Կոստանդնուպոլիսը, Վանը և Կարինը, որոնք հայտնի էին դարձել իրենց ոսկերիչներով: XVIII և XIX դարերում Կոստանդնուպոլսի ոսկերիչների դասը գրեթե ամբողջովին բաղկացած էր հայերից: 1806 թվականի սուլթանական մի հրովարտակում հիշատակվող

տասնյոթ լավագույն վարպետ ոսկերիչներից միայն մեկն էր հույն: Հայ արծաթագործների, ոսկերիչների և ակնագործների արտադրանքն իր որակով գերազանցում էր եվրոպականին: Հայ ոսկերիչները միաժամանակ թանկարժեք քարեր, հատկապես ադամանդ մշակող լավագույն արհեստավորներն էին: Հայերն այս արհեստի սկզբնավորողներն էին երկրում: Ադամանդ մշակող հայ վարպետները չէին զիջում Հոլանդիայի, Բելգիայի, Ֆրանսիայի իրենց արհեստակիցներին:

Ժամագործության մեջ հայերը նույնպես առաջնակարգ դիրքում էին: Հայ ժամագործների մեջ նշանավոր էր մեծանուն երգահան Տիգրան Չուխաճյանի հայրը՝ Գեւորգ Չուխաճյանը, ով սուլթան Մեջիդի արքունի ժամագործապետն էր: Նա հնարել է երգող ժամացույց: Իր վարպետությամբ հայտնի էր նաեւ ժամագործ Մկրտիչ Գալֆայանը, ում հնարած մեծ ժամացույցը լարվում էր տասը տարին մեկ անգամ: Նա մեծ հռչակ է ունեցել նաեւ որպես ոսկերիչ, պատրաստել է օսմանյան զինանշանը: Եղել է սուլթան Մահմուտ Բ-ի ոսկերիչը:

Զիլճյան գերդաստանի անդամները շուրջ 3 դար բարձրորակ ծնծղաներ են պատրաստել և հռչակվել ամբողջ աշխարհում: XIX դարում Քերովբե Զիլճյանը Անգլիայում ներկայացրել է իր ծնծղաները: Ավստրիացի երգահան և խմբավար Յոհան Շտրաուսը պատվիրել է այդ ծնծղաներից՝ նշելով, որ դրանց երանգալով՝ լրացրել է իր նվագախմբի հարվածային գործիքների ակնհայտ պակասը: Զիլճյանները 1914թ. ունեին ծնծղայագործության երկու գործարան: Նրանց պատրաստած ծնծղաներն իրենց որակով գերազանցել են եվրոպականին թե՛ իրենց հնչողությամբ և թե՛ դիմացկունությամբ: «Զիլճյան» փորագրությունը կրող ծնծղաներն այսօր գործածվում են աշխարհի բազմաթիվ սիմֆոնիկ, փողային եւ էստրադային նվագախմբերում:

Կոշկակարությունը և դերձակությունը նույնպես հայերի նախասիրած արհեստներից էին, որոնք զարգացած էին Կ.Պոլսում, Երզնկայում և երկրի այլ քաղաքներում: Կարնո հայ դերձակներն առաջնակարգ էին Թուրքիայում: Նրանք էին կատարում օտար վաճառականների և նույնիսկ կառավարության պատվերները: Եվրոպական հագուստները երկրի քաղաքներ մուտք են գործել հայերի և հույների միջոցով: XX դ. սկզբին հայերն էին անգլիական նորաձեւության տարածող վարպետները:

Հայ կինը ևս իր բաժինն է բերել կայսրության մեջ արհեստների զարգացման գործին: Հայ կնոջ ճաշակն ու ստեղծագործելու ձիրքն ի հայտ են եկել ասեղնագործության և ժանյակագործության մեջ: Եվրոպան այս աշխատանքները ճանաչում է հայկական ժանյակ «տանթել արմենիեն» անվանումով: Այդ ժանյակները զարդարում էին սուլթանական հարեմի և թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կանանց հագուստները:

Գեւորգ, Ստեփան եւ Վիչեն Աբդուլլահ եղբայրները եղել են օսմանյան լուսանկարչության հիմնադիրները: Նրանք արքունի լուսանկարիչներն էին, որոնց վարկը շատ բարձր էր սուլթանի մոտ: Աբդուլլահների մոտ էին լուսանկարվում Կոստանդնուպոլիս ժամանած եվրոպական երկրների մեծանուն այրերը:

Թե՛ մայրաքաղաքում և թե՛ երկրի կենտրոնական քաղաքներում գրեթե ամբողջովին հայերն էին լուսանկարիչները, բժիշկները, դեղագործները, փաստաբանները և ազատ մասնագիտության այլ ներկայացուցիչները: Ինչպես ռուս պատմաբան Գոլոբորոտկոն է վկայում, քաղաքներում առանց հայերի չէր կարող գոյություն ունենալ տեխնիկայի, արվեստի, գիտության, արհեստագործության որևէ ճյուղ:

Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում հայերի զբաղած դիրքի մասին վկայում է հայերի 1915թ. տեղահանության և կոտորածների ականատես Յոհաննես Լեփսիուսի մի նկարագրությունը. «Հայերի տեղահանությունից հետո դատարկված բնակավայրերում արդեն, մի քանի բացառություններից բացի, ոչ որմնադիր էր մնացել, ոչ երկաթագործ, ոչ հյուսն, ոչ ատաղձագործ, ոչ բրուտ, ոչ դերձակ, ոչ կոշկակար, ոչ ոսկերիչ, ոչ դեղագործ, ոչ փաստաբան: Չկար այլևս մեկ անձ, որ զբաղվում էր ազատ մասնագիտություններով և արհեստով»[2]:

Այսպիսով, արհեստները, այլ զբաղմունքներն ու ազատ մասնագիտությունները քաղաքային հայ բնակչության հիմնական միջոցն էին: Սակայն, բացի կենսապահովման առաջնային գործառույթից, արհեստներն ունեն նաև էթնիկ ինքնության պահպանման գործառույթ, որի դերն ու նշանակությունը հատկապես վառ դրսևորվեց հայոց Մեծ եղեռնի տարիներին ու հատկապես դրանից հետո, երբ աշխարհասփյուռ հայ ժողովուրդն իր գոյությունը կարողացավ պահել ու մեջքը շտկել հենց արհեստներին տիրապետելու շնորհիվ: Ցեղասպանության համատեքստում արհեստների դերն ու նշանակությունը դիտարկելիս հստակ տարանջատվում է երկու իրողություն. արհեստը՝ որպես ֆիզիկական բնաջնջումից փրկվելու միջոց զանգվածային կոտորածների ժամանակ և որպես գոյությունը պահպանելու եղանակ՝ Մեծ եղեռնից հետո:

Նախ անդրադառնանք առաջին իրողությանը: Ինչպես նշվեց, դեռ դարեր առաջ աշխատող ձեռքերի, հատկապես արհեստավորների նկատմամբ եղած պահանջարկը մեղմացրել է տեղացի թուրքերի հայաջինջ մոլուցքը: Այս երևույթը հայտնի է դեռ Օսմանյան Թուրքիայի ձևավորման ու կայացման տարիներից, ինչի մասին խոսվեց վերևում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ երիտթուրքերն իրականացնում էին իրենց հայաջինջ քաղաքականությունը, ողջ մնացած տղամարդկանց մի փոքր մասը կարողացավ փրկվել շնորհիվ իր արհեստավարժությանը: Բերենք մի քանի օրինակներ ականատեսների վկայություններից: Գևորգ Զուլալյանն իր «Գրվածք սփյուռքում արևմտահայերու զբաղեցրած արհեստներու մասին» ձեռագիր աշխատության մեջ հիշում է. «1915 թվին մեր հարազատներից հորեղբորս, մորեղբորս ընտանիքներով մեր քարավանից բաժանեցին և նրանց քշեցին դեպի Սիրիա: Դամասկոսի մոտերքը կարավանը կանգ կառնե: Այդ ժամանակ այսպիսի մի բարեհոգություն, որ թուրք և գերմանացիներից հրաշք պետք էր սեպել, և կամ թե շատ խիստ կարիք ունեին արհեստավոր մարդկանց համար, և մի հրաման կուգա, որ այդ կարավանում արհեստավոր

---

[2] *Չերքեզյան Կ., Աֆիոն-Կարահիսարի հայ գաղթօջախը, Եր., 1986, էջ 21.*

մարդկանց իրենց ընտանիքներով բերվի Շամ՝ Սուրիո մայրաքաղաք և արհեստավոր ընտանիքները կջոկվեն ոչ արհեստավոր ընտանիքներուց: Անշուշտ իրենք ալ չգիտեին, թե լավ են անում, թե ոչ, բայց և այնպես այդ արհեստավորները իրենց ընտանիքներով ողջ մնացին մինչև պատերազմի վերջը, շնորհիվ իրենց արհեստին, և ողջ ալ վերադարձան պատերազմից հետո, իսկ արհեստավոր չեղողներին քշեցին դեպի Ռաքքա և այնտեղից էլ ուրիշ քարավաններով տարան մինչև Տերզորի անապատները: Ահա արհեստ գիտենալը ինչպես օգնեց այդ մարդկանց»[3]:

Այնուհետև նա մանրամասն ներկայացնում է նաև իր դերձակ հոր փրկության պատմությունը, որը շնորհիվ իր արհեստավարժության ազատվում է տաժանակիր աշխատանքներից ու մինչև պատերազմի վերջ մնում հայրենի Դարդանել քաղաքում:

Նույնպիսի վկայություն ունենք նաև Այնթապից: «Այնթապի հայերը աքսորվում էին երկու ուղղությամբ՝ դեպի Սիրիայի հարավային մասերը, Պաղեստին և դեպի Դեր Զոր: Տեղահանության չենթարկվեցին այն փոքրաթիվ հայերն ու նրանց ընտանիքները, որոնք որպես արհեստավոր, բժիշկ և այլն, օգտակար էին բանակին կամ աշխատում էին ամերիկյան հաստատություններում»[4]:

Արհեստների՝ որպես սպանդից փրկվելու գործոնի մասին վկայում է նաև Կարապետ Չերքեզյանն իր «Աֆիոն-Կարահիսարի հայ գաղթօջախը» գրքում: Խոսելով 1919-20 թթ. հույն-թուրքական պատերազմից հետո ստեղծված իրադրության մասին նա գրում է. «Մինչ այդ տեղական թուրքական իշխանությունը ենթադրելով, որ հայերը կարող են անցնել հույների կողմը և օգնել հունական զորքին, քաղաքի 18-50 տարեկան բոլոր հայ տղամարդկանց աքսորեց Փոքր Ասիայի արևելքում գտնվող Կոչհիսար կոչված սակավաբնակ, անբերրի, աղի լճերի շրջանը: Աքսորյալ հայ աֆիոնցիներն իրենց գոյությունը քարշ էին տալիս սոսկալի պարմաններում: Միայն արհեստավորները մոտակա գյուղերում ու ավաններում ծանր աշխատանքով կարողանում են պահպանել իրենց գոյությունը՝ ապշեցնելով տեղական բնակիչներին»:[5]

Եթե արհեստի շնորհիվ բնաջնջումից փրկվեց հայ բնակչության մեկ տոկոսը, ապա մնացած մասն իր ձեռքի աշխատանքն ու արհեստավարժ հմտություններն օգտագործեց գոյությունը պահելու և մեջքը շտկելու համար: Ահա ինչպես է արհեստի դերը կարևորում Գ. Զուլալյանը. «Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սաստիկ տուժած, ամեն ինչ կորցրած ողջ մնացած հայերը շշմած ու մոլորված ցրվեցին ասթին, անթին, տեր ու տիրական չունենալով իրենց կորցրածից, կողոպտվածից ոչ մի հատուցում չստանալով թուրք կողոպտիչ կառավարությունից, ի՞նչ պետք է ընեին, ինչո՞վ պետք է ապրեին այդ տուժյալ մարդիկ, և ոչ ոք չհոգաց այդ մարդկանց մասին: Հատուկ կոմիտե կազմվեց, որ իբր թե թուրք կառավարությունից պիտի գանձեր բոլոր տուժած հայերու նյութական

---

[3] *Զուլալյան Գ., Գրվածք սփյուռքում արնմտահայերու զբաղեցրած արհեստներու մասին, 1979, ձեռագիր, ԳԱԱ ՀԱՄ, ԱԲԱ 5/89, էջ 3-4:*

[4] *Թոքմաճեան Հ., Այնթապի ասեղնագործութիւն, հ. Ա., Հալեպ, 2015:*

[5] *Չերքեզյան Կ., Աֆիոն-Կարահիսարի հայ գաղթօջախը, էջ 122:*

կորուստներու արժեքը և պիտի բաժներ ողջ մնացած հայերուն: Ցուցակ կազմվեց երկու հատ, մեկը հանձնվեց, իսկ մյուսը մնաց մարդկանց մոտ, և այդպես մինակ ցուցակը մնաց մարդկանց մոտ, և ոչ մի հատուցում չտացավ տուժող հայը: Բայց հայ ժողովուրդը երբեք չհուսահատվեց և սկսավ իր գլխուն ճարը տեսնել:

Սրանից վաթսուն տարի առաջ, որ արդեն պատերազմը վերջանալու վրա էր, և ողջ մնացող հայերը ցրված էին թուրքիա և արաբական երկրներում, այն ժամանակ այդ երկրներում ոչ գործարան կար, ոչ ալ աշխատանց, ինչպե՞ս ապրեցին այդ մարդիկ, ինչպե՞ս պիտի պահեին իրենց գոյությունը, եթե շատ շատերը արհեստավոր չըլլային»[*]:

Այս իրողությունը կարևոր էր հատկապես կանանց ու որբ երեխաների գոյության հիմնախնդիրը կարգավորելու առումով, քանի որ փրկվածներից շատերը հենց նրանք էին: Հայտնի են բազմաթիվ օրինակներ այն մասին, թե ինչպես հայ կանայք և աղջիկներն իրենց ձեռագործով կարողացան գոյություն պահպանել, երեխաներին կերակրել ու ոտքի կանգնեցնել: Ասեղնագործությունն ու ժանեկագործությունն այն արհեստներն են, որոնք, ի տարբերություն գորգագործության, որևէ բարդ գործիքի կամ հաստոցի կարիք չունեն, ուստի հենց դրանցով էին շատերը զբաղվում օտարության մեջ:

Դեռ 1895-96 թթ. համիդյան կոտորածներից հետո ամերիկյան, գերմանական և Եվրոպայի այլ երկրների միսիոներական կազմակերպությունները, ճիշտ գնահատելով հիշյալ արհեստների արտադրանքի պահանջարկը, օգնության եկան Արևմտյան Հայաստանի աղետյալ բնակչությանը՝ տեղերում բացելով որբանոցներ ու արհեստանոցներ: Դրանց թիվը բազմապատկվեց Մեծ եղեռնից հետո բոլոր այն բնակավայրերում, որտեղ տեղակայված էին կոտորածներից փրկվածները: Այդ կազմակերպություններն ու անհատներն զբաղվում էին նաև պատրաստի արտադրանքի իրացման հարցով, ինչը ևս կարևոր էր, քանի որ հայ կանայք չէին տիրապետում լեզուների և ավանդաբար դուրս էին շուկայական հարաբերություններից:

Արհեստներին տիրապետելը կարևորվում էր նաև երեխաների ու պատանիների աշխատանքային դաստիարակության գործընթացում: Հայ որբուկներին նոր կյանքի պատրաստելու համար անհրաժեշտ էին ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև գործնական հմտություններ՝ իրենց ապրուստը վաստակելու համար: Ուստի որբանոցներում հատուկ ուշադրություն էր տրվում արհեստների ուսուցմանը, որոնց հատկացված դասաժամերը գերազանցում էին մյուս առարկաների ժամերին: Այս դեպքում ևս դպրոցների ու որբանոցների ղեկավարները կազմակերպում էին իրենց սաների աշխատանքների վաճառք՝ ստացված գումարն օգտագործելով նրանց իսկ խնդիրները լուծելու համար:

Այսպիսով՝ բարեգործական, միսիոներական կազմակերպությունների ու անհատների միջոցով Եղեռնի տարիներին ու դրանից հետո հայ գաղթականների հետ հայկական արհեստներն ու հատկապես գեղարվեստական ստեղծագործու-

---

[*] *Զուլալյան Գ., նշվ. աշխ., էջ 3:*

թյան նմուշները դուրս եկան իրենց բնօրրանից և սփռվեցին աշխարհով մեկ՝ ամենուր ներկայացնելով ազգային արվեստը՝ որպես հայ ժողովրդի դարավոր մշակույթի բարձրարժեք վկայություն, լայն ճանաչում բերելով նրա: Այդ տարիների մամուլում, ականատեսների հիշողություններում, արխիվային փաստաթղթերում բազմաթիվ տվյալներ են պահպանվել, որոնք վերաբերում են որբանոցների սաների, դպրոցների աշակերտուհիների բարձրարժեք ձեռքի աշխատանքներին, դրանց ցուցադրմանը և վաճառքին՝ կարևորելով դրանց վաճառքից ստացված հասույթը՝ որպես ստեղծված դրությունից դուրս գալու և մեծաթիվ գաղթականությանն օգնելու այլընտրանքային տարբերակ:

РЕМЕСЛА В КОНТЕКСТЕ ГЕНОЦИДА АРМЯН

___ *Резюме* ___ ___ *К. Базеян* ___

Ремесла были основным средством существования городского армянского населения Западной Армении и Турции. Кроме основной функции жизнеобеспечения, ремесла исполняли также функцию сохранения этнической идентичности, роль и значение которой особенно ярко выявились и в годы Геноцида армян, а позже, когда разбросанный по всему миру армянский народ благодаря владению ремёслами, смог сохранить своё существование. В статье представлены на обсуждение вопросы роли и значения ремёсел в контексте Геноцида в двух ракурсах: ремесло как средство спасения от физического уничтожения во время массовой резни и как средство выживания после Геноцида.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բազեյան Կարինե Ռազմիկի - պ.գ.թ., ՀԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Մշակույթի նախարարության Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն. E-mail: bazeyan60@mail.ru